

Գնահատելի է Փարիզի Հայ Ուսանողական Միութեան այս ազգագուտ ձեռնարկը:

Հայ Ուսանողական Միութիւնը կրնայ շատ բան կատարել մշակութային և ուսումնական հոգի վրայ: Իրեն կը մաղթենք ուրեմն փայլուն ապագայ մը:

Յ. ՏՈՊԱՆՅԱՆ

ԱՐԱՐԵՐԷՆ

ՁԵՌԱԳՐԱՅ ՅԱՆԿ ՄԸ

Շնորհակալութեամբ ընդունած ենք մինգ հատոր արաբերէն գրքեր Մեծ. Պօղոս Վ. Շալաթ՝ հալէպցի ասորի քահանայէն:

Երկուքը իր անձնական ձեռագրաց (1125 հատոր) ցանկն է, գաղղիներէն լեզուով և արաբերէն կարեւոր տեղեկութիւններով. միւս երեքէն միմիւր յօդոյն է, երկուքն ալ իր արաբերէն հրատարակութիւններն են:

Ցանկը բանասիրութեան մերկայ պահանջներուն համեմատ եղած է. Կը դնէ ձեռագրի թիւը, հեղինակին անունն ու ժամանակը, ձեռագրի սկիզբն ու վերջը (արաբերէն) օրինակութեամբ թուականը, գրչութեան տեսակը, էջերը և անոնց տողերը: Այս ամէն բան ամփոփ և անթերի:

Հակառակ իր ձեռագրաց շատախօս ցամաքտակութեամբ՝ թուով ու կշռով են իր բառերը, և այն՝ գուտ կարեւորի մասին:

Այսու հեղինակը կրնայ պարծիլ իբր օրինակ բարեկեցիկ եկեղեցականի մը ուսումնասէր ու գովելի եռանդին:

Ձեռագիրներն արաբերէն են. թէև հնութեամբ քիչերը մասնաւոր կարեւորութիւն մ'ունին, սակայն միւթով՝ ամէնքն ալ հետաքրքրական են: Հնագոյնը թ.Ա. դարուն է, միակը՝ թ. դարուն՝ 6-7, թ.գիմ՝ 10-15, թ.գիմ քսանի չափ. ի թեմի՝ բոլոր մնացածները:

Հայերուս հետաքրքրական է թ. 1000, Պետրոս Աղաթախեանի քարոզներու գիրքը, գեղեցիկ և պատկերազարդ, միակ հայ ձեռագիրը այդ հաւաքածոյին:

Բժշկական միւթերու վրայ յատուկ ուշադրու-

թեան արժանի են թթ. 12, 149, 545, որոնք Մը-խիթար Հերացուն «Ջերմաց միւթարութիւն» երկին կը նմանին:

Մկրտիչ-Էլ-Քէսիի հալէպցի արաբախօս հայը շատ մ'ընտիր բանաստեղծութեանց եւ հոգեւոր գրութեանց հեղինակ է թթ. 197, 198, 317, 323, 965:

Նոյնպէս Գրիգոր Յովսէփ Յակովբ թ. 597, Աստուածաշունչի արաբերէն բառգիրք մը յօդոյն է:

Թթ. 265 և 519 Մեծն Աղեքսանդրի վարքն է, որ մեր հրատարակածին ոճով կը սկսի:

Թթ. 1010 (Ժ. դարու) Ս. Գր. Նիսացուն «Յաղագս ընդ թեան մարդոյ» ցանկն են. բաղդատութիւն մը հայ հրատարակութեան կրնայ շատ օգտակար ըլլալ:

Թիւ 430ը վերջերն ունի երկու հրովարտակներ Բ. Դոնէն. միմ ժառանգական խնդրով կը զբաղի, միւսն ալ հայոց մասին մը ազատութիւնը կը շօշափէ:

Քաղկեդոնի թողովին մկատմամբ կը գրեն թթ. 338 և 538 ձեռագիրները. Աը կ'ըսէ թէ՝ հայերը քաղկեդոնի թողովը մերժելով՝ հակասութեամբ մէջ են. քանի որ տեսականօրէն մոյմ վարդապետութիւնը կը դաւանին, իսկ դրապէս թողովը կը մերժեն: Միւսը «Հերքումն ամբաստանութեանց հայոց ընդդէմ թողովոյն քաղկեդոնի»:

Ցանկին տիտղոսն է. Bibliothéque de manuscrits - Paul Sbath - Cairo, 1928, հա. Ա. Բ. էջ 204-252:

Միւս երեք հատորներէն Աը (Էլ - Մաշրէա) Բրիտանիկութեան ջատագովութիւն մ'է. Բը արաբ հեղինակի մը Բժշկական գիրք մ'է գոր կը կոչէ «Jardin Médical» տպ. Գահիրէ, 1927. Գը մարդկային հոգւոյն վրայ է. «Traité sur l'âme» տպ. Գահիրէ, 1928. Երկու հրատարակութիւններն ալ եղած են ձեռագիրներու բաղդատութեամբ:

Ամենէն հետաքրքրականն են 1931ին հրատարակած «Գիրք վաստակոց» ի մոր ձեռագրի մը հատուածները. արաբերէն (գաղղ. թարգմանութեամբ) և 5-6 օրինակներու քաղդատութեամբ:

Կը մաղթենք հեղինակին արիւթիւն և անխոնջ յարատեւութիւն որ իր մորամոր երկասիրութիւններով գայ լոյս սփռելու՝ գիտական աշխարհին դեռ այնքան մութ մնացած խնդրոց վրայ:

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ

Հրապարակաւ խորին շնորհակալութիւն կը յայտնենք մեր Միւթարեան վարժարաններուն անդին աշակերտ և իր ազգասիրութեամբ Փարիզի մէջ ծանօթ

ԱՏԱՄԱՐԱՐՅԱՊ. Պ. ՀՐԱՆԴ ԶԱՄԱՃԵԱՆԻ

որ ի նշան իր տաճած լաւագոյն զգացումներուն և անկեղծ բարեկամութեան հանդէպ Միւթարեան վարժարանի աշակերտներն Վանքիս Մատենադարանին նուիրեց արկղ մը գիրք, ամբողջապէս հայագիտական և Հայկական Կառն վերաբերեալ:

Ի մէջ այլոց նշանակեց 21 հատոր Փրանսերէն և մէկ երկու հայերէն գրքեր. Հազարապէս Զ. Խանդատեանի հրատարակութիւններէն, Լինչի «Հայաստան»ը, ամբողջական շարք մը «Revue des études Arméniennes», Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան հրատարակութիւններ, և տասնեակ մը խնամուած հաւաքածոներ մեծ պետութիւններու մամուլէն: Հայ Ազգին պատմութեան, կեանքին և մեծ գաղտնի նուիրուած յօդուածներու:

ՆՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՈՐԶԵԳԻՍԸ

Անցեալ հոյեմբեր 1ին, Մ. Հ. Ուս. Միութիւնը Միւթարեան ուսանողարանի իր կեդրոնին մէջ գումարեց 1931-32 տարեշրջանի իր Ա. Ընդհ. Ժողովը, ուր, ինքնաբերաբար հրաժարող նախկին վարչութիւնը պարզելով իր միամեայ բեղուն գործունէութիւնը, արժանացաւ ներկայ ընկերներու գնահատական բանաձեւերուն:

Վարչական այս հաշուետուութեան յաջորդեց, գաղտնի քուէարկութեամբ, նոր վարչութեան ընտրութիւնը՝ որ ստացաւ հետեւեալ կազմը:

Նախագահ	Ընկեր . . .	Զարեհ Մութաֆեան
Փոխ-Նախագահ	» . . .	Բարսեղ Տիարեան
Քարտուղար	» . . .	Յովհաննէս Երամեան
Գանձապետ	» . . .	Էմիլ Կիւզեան
Գրադարանապետ	» . . .	Սարգիս Քեօրոզեան

Այդ թուականէն առիւ մը վերջ, նոր վարչութիւնը իր առաջին Ընդհ. Ժողովին մէջ պարզեց ընկերներուն տարեկան գործունէութեան իր ծրագիրը, որ է.

- 1) Սարքել հանդէս մը թատերաժողովան.
 - 2) Սարքել պարահանդէս մը (այս երկուքը գանձանակի աչքով դիտուած).
 - 3) Ընդլայնել առաւելապէս ուսանողներէ կազմուած բանախօսութիւնները նոր հրաւիրեալներով.
 - 4) Զարկ տալ հայ մշակոյթը իտալացի համայնքին ծանօթացնող բանախօսութիւններուն.
 - 5) Շարունակել արտասահմանի հայ ուս. միութիւններուն հետ սկսուած գործը.
 - 6) Կարելիութիւններ ստեղծել թղթակցելու համար Հայաստանի համալսարանական ուսանողներուն հետ ու լրջօրէն հետեւիլ Հայաստանի Պետ. Համալսարանի «Տեղեկատու» թիւերուն.
 - 7) Տօնել Սարիլ 11ը.
 - 8) Տօնել Մշակոյթի Օրը.
 - 9) Սարքել ընտանեկան հաւաքոյթ մը ընդմէջ Միւթարեան գաղութին և ուսանողներուն, փոխադարձ ծանօթութեան նուիրուած.
 - 10) Սարքել հանդէս մը, նուիրուած՝ աւարտող և նորամուտ ընկերներուն:
- Աւանդաբար կրկնուող հանդէսներու վրայ նոր վարչութեան նոր յաւելումներով կազմուած այս տարեկան գործունէութեան ծրագիրը՝ պիտի ըլլայ ամենամեծ ապացոյցը մեր Ծրագիր - Կանոնագրի հետադիմաց շարունակելուն, մասնաւորապէս Հայ մշակոյթի վրայ կազմակերպած իտալերէն բանախօսութիւններով ու քոյր միութիւններու հետ գաղափարի շարկապ մը ստեղծելու ձգտումներով, որոնք իր նպատակին հիմնական գիծերէն են:
- Հերոս, թերթերուն մէջ ցրուած մեր կոչը, չէ տուած դեռ սպասուած արդիւնքը: Բայց լաւատես ենք որ մօտերս հրապարակ ելած մեր համետ «Բացառիկ Թիւ»ը, գրգիռ պիտի ըլլայ այդ միեւնոյն գաղափարին՝ համերապական հայ ուսանողական մտածելակերպ մը ստեղծելու, հակառակ ապրուած միջավայրերու զանազանութեան:
- Մեծ է գերը վաղուան պատրաստուող այս լուսաւոր սերունդին, կը բաւէ միայն ունենալ հասունութիւն և գիտակցութիւնը գերին:
- Մենք պատրաստ ենք այս ուղղութեամբ քոյր միութիւններէ ստացուած թղթակցութիւններուն լայնօրէն տրամադրուիլ:

Վ.ԱՐՁՈՒԹԻՒՆ

Վարչութեան հասցէն. UNIONE STUDENTI ARMENI
Pensione Corti Via A. Mauri 4 Milano (Italia)

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

“ԲԱԶՄԱՎԷՊ”

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ՏՈՒԱՐ 3,50 ԿԱՆԻԿ

ՀԱՆԴԵՍԻ

ՈՐ ԿԸ ԹԵԽԱԿՈՒՅ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ

ԻՆՆՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

1843 - 1932

Գարոցներու, ակումբներու, որրամոցներու և ազգային բոլոր ընկերական հաստատութեանց համար իշտ ԳԻՆ. Ասիլ գաւտ ո'ւ է գեղջի համար հարկ է կամխապէս յարմարիլ խմբագրութեան հետ: Թղթակցութիւն, բանեղին, յօդուած գրելու ուղղակի խմբագրութեան հասցէին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՎԵՆԵՏԿՈՅ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Ա. ՅՈՎԱԿԵԱՆ
ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ
(ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ)
(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. Զ. 40)

Հ. ԴԱՆԻԷԼ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԳՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅ. - ԳԱՂՂԻԵՐԷՆ
ԳԵՂԵՑԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Երկսիւն, ամենամօտ ըստ ամօթերով,
և գաղղիական ոճերով լատագրելը որ լոյս տեսած
ըլլայ ցարդ
(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3)

Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԵՄԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐ
ԳՐԱԳԼՏ ՀԱՅԵՐ
ԻՆՆԵՐՈՐԳ ՇԱՐՔ
*** (ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 3) ***

Հ. ՄԱՆՈՒԷԼ ԹԱՇՃԵԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻՋԻՆ ԳԱՍԸՆԹԱՅՔ (Գ. ՏԱՐԻ)
(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 1. 2)

Հայ տաղանդաւոր և սիրուած քերթող
ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂՏՈՒԹԵԱՆՅ ՀԱՒԱՔԱՍՏՈՆ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ
մեծադիր եւ շքեղ տպագրուած իւն
ջեղչուած զին, կանխիկ, ճանապարհածախսով
ԻՏԱԼԻԱ՝ Տօլար 2.86 — ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ Տօլար 3.12
կը վաճառուի միայն Ս. Ղազարու տպարանէն

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՔՃԵԱՆ
ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ
Նախնական և երկրորդական դպրոցներու համար
ԱՅԳԵՍՏԱՆ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
(ԳԻՆ՝ ՖՐ. Զ. 1)

ԱՄԷՆ
ՀԱՅՈՒ
ՍՐՏԻՆ
ՄՕՏԻԿ
ՅՈՒՇԵՐ
✱

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ պարզ գոյն, հատը կ'արժէ . . . 0 20
» » գունաւոր . . . 0 35
Հայաստանի նկար գունաւոր, մեծադիր . . . 3 —
Աւարայրի գիւցազները գունաւոր, մեծադիր . . . 3 —
Աւվազովսկիի փառսը գունաւոր . . . 3 —
» փարոս Նափուլիի գունաւոր . . . 3 —
Հ. Ղեւոնդ Աւիշան, գունաւոր, մեծադիր . . . 0 20
ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ փարտեր 16 հատ, հատը . . . 3 —
» սեւաւոյ պատկերներ մեծադիր . . . 15 —
ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՔԱՐՏԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ, սեւ, մեծադիր . . . 3 50
» » սեւ, փոքրադիր . . . 5 —
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՇՄԱՆԵՐ 11 Ազգ. գեմբերով, 100 հատը . . .

Ապագրանքներու համար դիմել տպարանիս վարչութեան



IMPRIMERIE ARMÉNIENNE
VENISE (Italie)
St. Lazare